ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

18. 06. 2024 *ք. Իջևան*

Մասնակցում էր ֆակուլտետի գիտական խորհրդի 23 անդամներից 14-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի կրթական ծրագրերի ղեկավարների տարեկան հաշվետվությունների ներկայացում (զեկուցողներ՝ **կրթական ծրագրերի ղեկավարներ, Կ. Պողոսյան**):
2. Առկա ուսուցման (2024-2028 թթ.), հեռակա ուսուցման բակալավրի (2024-2029 թթ.) և մագիստրատուրայի (2024-2026 թթ.) կրթական ծրագրերի հաստատում (զեկուցողներ՝ **կրթական ծրագրերի ղեկավարներ, Կ. Պողոսյան**):
3. Ֆակուլտետի առկա ուսուցման՝ 2023-24 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների քննարկում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
4. 2024-2025 ուստարվա ուսումնական պլանների քննարկում և հաստատում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցողները նշեցին, որ 2023-2024 ուստարվա աշխատանքային պլանների հիման վրա կրթական ծրագրերի ղեկավարները ուսումնական տարվա վերջում պետք է ներկայացնեն տարեկան հաշվետվություններ: Կրթական ծրագրերի ղեկավարների կողմից ներկայացված հաշվետվությունները նախապես ուղարկվել են ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներին: Դրանցում արտացոլված է հաշվետու ուստարվա ընթացքում կրթական ծրագրերի ղեկավարների կողմից իրականացված գործունեությունը՝ ուսումնական, մեթոդական, խորհրդատվական և կազմակերպչական հարցերի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Աղուզումցյանը, բ.գ.թ., դոցենտներ Լ. Թումանյանը, Կ. Պողոսյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ֆակուլտետի կրթական ծրագրերի ղեկավարների տարեկան հաշվետվությունների ներկայացման հարցի վերաբերյալ կրթական ծրագրերի ղեկավարների և Կ. Պողոսյանի հաղորդումներն ընդունել ի գիտություն, գործունեությունը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի մասին ևս զեկուցեցին կրթական ծրագրերի ղեկավարները և Կ. Պողոսյանը: Մասնավորապես նշվեց, որ կրթական ծրագրերի ղեկավարների գլխավորած կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերը սահմանված ժամկետներում վերանայել են ծրագրերը, ըստ անհրաժեշտության կատարել որոշակի փոփոխություններ և շտկումներ:

Ընթացիկ՝ 2023-27, 2023-28 ուստարիների կրթական ծրագրերի համեմատ՝ փոփոխություններ են կատարվել միայն որոշ կրթական ծրագրերում: Այսպես՝ «Հոգեբանություն» կրթական ծրագրի վերանայման արդյունքում ուսումնական պլանում կատարվել են հետևյալ փոփոխությունները. մասնագիտական կառուցամասում (պարտադիր) «Հոգեբանական հետազոտությունների մեթոդաբանական հիմունքներ» դասընթացի փոխարեն ներդրվել է «Հոգեբանության մեթոդաբանական և տեսական հիմունքներ» դասընթացը: Մասնագիտական կառուցամասից (կամընտրական) հանվել են «Հոգեբանական առաջին օգնություն», «Հոգեախտաբանություն» դասընթացները, և ներդրվել են «Հատուկ հոգեբանություն» և «Հաղորդակցման հոգեբանություն» դասընթացները:

«Օտար լեզու և գրականություն» մասնագիտության «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրով սովորող ուսանողների համար ամբիոնի որոշմամբ նպատակահարմար է համարվել 1-ին կուրսում սովորողների համար «Ֆրանսերենի լեզվական հմտություններ-1» և «Ֆրանսերենի լեզվական հմտություններ-2» առարկաների համար նախատեսված 90 գործնական ժամերից հատկացնել «Ֆրանսերենի հնչյունաբանություն» դասընթացին, իսկ 2-րդ կուրսում «Ֆրանսերեն-3» և «Ֆրանսերեն-4» առարկաների 117 գործնական ժամերից առանձնացնել «Ֆրանսերենի քերականություն» դասընթացին հատկացվող ժամաքանակ: Որոշվել է փոփոխություն

կատարել նաև դասագրքերի մեջ, աշխատել ժամանակակից հրատարակության դասագրքերով, որոնք ուսանողին կտան ժամանակակից ֆրանսերենի առավել կիրառելի բառապաշար, թեմատիկ առումով ավելի ընդգրկուն և տարաբնույթ կլինեն:

«Արտասահմանյան գրականություն» առարկային առնչվող փոփոխություն է կատարվել դասընթացի մասնագրում: Քանի որ կրթական ծրագրում մեկ կիսամյակի համար նախատեսված թեմաները շատ են, այդ իսկ պատճառով թեմաները կրճատվել են՝ առանց ժամաքանակի փոփոխության:

«Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի «Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում-1,2,3,4» դասընթացի թեմաներում առանց ժամաքանակի փոփոխության ավելացվել են բանավոր խոսքի զարգացումը խթանող թեմաներ:

Մյուս կրթական ծրագրերում փոփոխություններ չեն կատարվել:

Վերանայված կրթական ծրագրերն ուղարկվել են Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժին, այնուհետև դրանք ներկայացվել են ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը: Ֆակուլտետի գիտխորհրդի անդամներն իրազեկվել են նախորդ ուստարվա կրթական ծրագրերի համեմատ այս ուստարվա կրթական ծրագրերում կատարված փոփոխությունների մասին: Ֆակուլտետի գիտական խորհրդի անդամները հավանություն տվեցին վերանայված ծրագրերին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը հ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Աղուզումցյանը, բ.գ.թ., դոցենտներ Լ. Թումանյանը, Մ. Զուրաբյանը, Կ. Պողոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել ֆակուլտետի առկա ուսուցման (2024-2028 թթ.), հեռակա ուսուցման բակալավրի (2024-2029 թթ.) և մագիստրատուրայի (2024-2026 թթ.) կրթական ծրագրերը և դրանք ուղարկել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը: Նա նշեց, որ ըստ նախապես սահմանված ժամանակացույցի՝ ֆակուլտետում մայիսի 11-25-ն ընկած ժամանակահատվածում

գործող 7 կրթական ծրագրով («Հայոց լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Պատմություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Հոգեբանություն») իրականացվել է ամփոփիչ ատեստավորում, որին մասնակցել է 91 ուսանող:

Առկա ուսուցման շրջանավարտների վերաբերյալ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահները գրել են կարծիք-հաշվետվություններ, որոնք շատ կարևոր են բուհի համար, քանի որ դրանց արդյունքները կիրառվում են որակավորման շնորհման գործընթացի կազմակերպման և իրականացման հետագա բարելավման նպատակով:

Ըստ հանձնաժողովների նախագահների՝ ԵՊՀ ԻՄ-ում այս տարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացը մասնաճյուղի ղեկավարության, վարչական ստորաբաժանումների և մասնագիտական ամբիոնների կողմից կազմակերպվել է պատշաճ կարգով և բարձր մակարդակով, ժամանակացույցների, գործող կարգով ավարտական աշխատանքների համար նախատեսված չափանիշների համաձայն:

«Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը նախագահում էր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Անահիտ Վարդանյանը: Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցած 6 շրջանավարտն էլ ստացավ «գերազանց»: Հանձնաժողովի նախագահը կարծիք է արտահայտել, որ ավարտական աշխատանքների թեմաներն արդիական են, թեմատիկան համապատասխանում է որակավորմանը, ցանկություն է հայտնել, որ նյութն ավելի բարձր որակով ներկայացվի: Նախագահի կողմից բարձր են գնահատվել շրջանավարտների՝ մասնագիտորեն գրագետ բանավոր խոսքը, մասնագիտական գիտելիքների և պատկերացումների դրսևորման, դրանց կիրառման կարողությունների մակարդակը, հաղորդակցման կարողությունների առկայությունը, ինքնակրթության հմտությունների դրսևորման մակարդակը: Աշխատանքների իրականացման հետագա բարելավման ուղղությամբ շրջանավարտներին առաջարկվել է կատարելագործել շնորհանդեսների որակը, իսկ ուսումնառության ընդհանրական արդյունքների բարելավման համար՝ շարունակել կրթությունը մագիստրատուրայում:

«Օտար լեզու և գրականություն» մասնագիտության (**«Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն»** կրթական ծրագրերի) ամփոփիչ

ատեստավորման հանձնաժողովը նախագահում էր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի լեզվաբանության և մանկավարժության ֆակուլտետի դեկան, դոցենտ, մ.գ.թ. Իռենա Մադոյանը: Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 24 շրջանավարտ. 14-ը ստացավ «գերազանց», 8-ը՝ «լավ», 2-ը՝ «բավարար»: Ըստ հանձնաժողովի նախագահի՝ թեմաներն արդիական էին և խորը հետազոտված ուսանողների կողմից: Շրջանավարտները պատրաստակամ և գիտակ մոտեցում էին ցուցաբերում հանձնաժողովի հարցերին: Ավարտական աշխատանքների իրականացման հետագա բարելավման ուղղությամբ հանձնաժողովի նախագահն առաջարկել է աշխատանքների խնդիրներում առաջ քաշել վարկած, որը կհաստատվի կամ կհերքվի դրանց կատարման արդյունքում: Ուսումնառության ընդհանրական արդյունքների բարելավման ուղղությամբ առաջարկվել է հնարավորինս շատ ուսումնասիրել մասնագիտական գրականություն:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը նախագահում էր «Հայաստան» հրատարակչության տնօրեն, բ.գ.թ. Վահագն Սարգսյանը: Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 13 շրջանավարտ. 9-ը ստացավ «գերազանց», 4-ը՝ «լավ»: Հանձնաժողովի նախագահի կարծիքով՝ ուսանողների գերակշիռ մասը դրսևորել է գիտական ակտիվություն, ուսումնասիրել է թեմային առնչվող գրականությունը, հանդես է եկել գեղեցիկ, ճկուն և սահուն, մասնագիտորեն գրագետ բանավոր խոսքով: Մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ նախագահն առաջարկել է մասնավորապես լեզվից ընտրել ավելի արդիական թեմաներ՝ տեղանքին, տարածաշրջանին առնչվող, ինչպես նաև ավելի մեծ ուշադրություն դարձնել ուսանողների ինքնուրույնությանը:

«Պատմություն» կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը նախագահում էր Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, պ.գ.դ. Խաչատուր Ստեփանյանը: Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 14 շրջանավարտ. 8-ը ստացավ «գերազանց», 5-ը՝ «լավ», 1-ը՝ «բավարար»: Մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկվել է բարձրացնել փորձնականորեն ստացված կամ ուսումնասիրված տվյալների հանրագումարային ներկայացման, սեփական տեսակետների վստահ պաշտպանության կարողությունների մակարդակը: Ավարտական աշխատանքների թեմաների ընտրության, շրջանավարտների կողմից

դրանց իրականացման հետագա բարելավման ուղղությամբ նախագահն առաջարկել է համաչափ բաժանել թեմաները՝ ըստ հայոց պատմության ժամանակաշրջանների:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը նախագահում էր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, դոցենտ, մ.գ.թ. Լուիզա Միլիտոսյանը: Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 22 շրջանավարտ. 9-ը ստացավ «գերազանց», 13-ը՝ «լավ»: Հանձնաժողովի նախագահի կարծիքով՝ ավարտական աշխատանքների թեմաները արդիական են, համապատասխանում են շնորհվող որակավորմանը: Ավարտական աշխատանքներում հստակ սահմանված է աշխատանքի նպատակը, և համապատասխանաբար ձևակերպված են խնդիրները, ներկայացված են հետազոտության օբյեկտը, առարկան, գործնական և տեսական նշանակությունը: Աշխատանքներում ուսանողները ներկայացրել են այն նոր մոտեցումները, որոնք առկա են տարրական մանկավարժության և ներկայացվող թեմայի դասավանդման մեթոդիկայում: Բոլոր աշխատանքներում իրականացված է մանկավարժական գիտափորձ, և հստակ առկա են բոլոր փուլերը: Ուսումնասիրության արդյունքներն ամփոփված են տրամագրերում: Ուսանողների ելույթներն ուղեկցվում են սահիկաշարով, որը համապատասխանում է իրենց թեմային և բանավոր խոսքին: Մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ նախագահն առաջարկել է շեշտադրել հիմնարար փաստաթղթերի և ժամանակակից գրականության ուսումնասիրությունը:

«Հոգեբանություն» կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը նախագահում էր Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կիրառական հոգեբանության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ. Աննա Առաքելյանը: Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 12 շրջանավարտ. 6-ը ստացավ «գերազանց», 6-ը՝ «լավ»: Հանձնաժողովի նախագահի կարծիքով՝ փորձարարական տվյալները ուսանողները կարողացան վստահ ներկայացնել, անհրաժեշտության դեպքում՝ սեփական տեսակետների դիտանկյունից: Գերազանց գնահատականներ ստացած ուսանողների կողմից վերհանված խնդիրները համակողմանի ուսումնասիրված և վերլուծված էին, ներկայացված էին գործնական առաջարկներ: Մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ առաջարկվել է բարձրացնել՝

1. հետազոտական աշխատանքի կազմակերպման հմտությունների մակարդակը,
2. հետազոտական աշխատանքի արդյունքների խորքային վերլուծական կարողությունների մակարդակը,
3. հետազոտության արդյունքների մեկնաբանության և ընդհանրական եզրահանգումներ անելու կարողությունների մակարդակը,
4. հետազոտության արդյունքների մշակման տեխնոլոգիաների տիրապետման մակարդակը:

Նախագահն առաջարկել է նաև ավարտական աշխատանքների թեմաները ձևակերպել կոնկրետ, որպեսզի հիմնախնդիրը և հետազոտության առարկան լինեն հստակ, իսկ թեմաները՝ հետազոտելի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Աղուզումցյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը բ.գ.թ., դոցենտներ Կ. Պողոսյանը, Մ. Զուրաբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2023-2024 ուստարվա առկա ուսուցման շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքները համարել բավարար և տվյալ հարցի վերաբերյալ Կ. Պողոսյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ Կ. Պողոսյանը նշեց, որ 2024-2025 ուստարվա ուսումնական պլանները, համաձայնեցվելով դասախոսների հետ, վերանայվել են կրթական ծրագրերի ղեկավարների կողմից, բերվել ավարտուն տեսքի, և այժմ դրանք ներկայացվում են հաստատման:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտներ Լ. Թումանյանը, Մ. Զուրաբյանը, հ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Աղուզումցյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել 2024-2025 ուստարվա ուսումնական պլանները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Կ. Պողոսյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Հ. Վանյան